ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 նոյեմբերի 2019թ. թիվ 643-Ա

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի ԹԻՎ 178-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1425-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «զ» պարբերության, ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. նոյեմբերի 8-ի թիվ 635-Ա որոշման 3-րդ կետի՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» փակ բաժնետիրական ընկերության 3,730,000 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 790,000 ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 2,940,000 ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2005 թվականի օգոստոսի 23-ի թիվ 178-Ա որոշմամբ հաստատված «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2,940,000 դրամ (երկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար), որը կազմում է 294 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000 դրամ:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 294 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. նոյեմբերի 13
ք.Վանաձոր